

ՕՐԱԳՐԵՐԻ ԵՆԹԱԺԱՆՐԸ XIX դԱՐԻ ԻՐԱՆԻ ՄԵՍՈՒԱՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գրական ժանրերի շրջայում հիշողության առաջնորդ լինելու գործառնական նշանակությամբ իրենց ուրույն տեղն ունեն մեծուարային ժանրերը՝ հուշագրային գրառումները՝ նոթատետրերը, ինքնակենսագրությունները, նամակները, օրագրերը:

Ժանրային բնույթով օրագիրը մեծուարային գրականության առավել պարզ ձևն է: Կազմված լինելով հեղինակի անձնական կյանքի դեպքերի ամենօրյա կամ պարբերական գրառումների հիման վրա, այն առանձնանում է ընդգծված անկեղծությամբ, հաղորդած նյութի հավաստիությամբ:

Թերևս օրինաչափ է, որ պարսկական գրականության մեջ դեռևս XI դարում սկզբնավորված, սակայն շարունակական զարգացում չունեցած մեծուարային գրականությունը XVIII դարի վերջերից երկրորդ կյանք ստացավ հենց այս՝ օրագրի ենթաժանրով:

XVIII դարի վերջը - XIX դարի սկիզբը համարվում է Իրանի պատմության նոր ժամանակաշրջանի սահմանագիծ: Երկիրն իր զարգացման այս՝ նոր, շրջադարձային փուլ ուղք դրեց ռուս-պարսկական, թուրք-պարսկական պատերազմներից և միջցեղային տևական բախումներից թուլացած և տնտեսապես քայքայված: Այս իրավիճակը նպաստավոր հող էր նախապատրաստել օտարերկրյա կապիտալի ներթափանցման համար: Ի լրումն դրա, Իրանը հայտնվել էր եվրոպական երկրների քաղաքական շահերի բախումնակետում: Օտար, մասնավորապես եվրոպական, պետությունների հետ սերտացած քաղաքական շփումները, առևտրա-տնտեսական առնչությունները, բնականաբար, նպաստում էին առաջադիմական գաղափարների ներթափանցմանը երկիր: Արդյունաբերության զարգացման առաջին քայլերը հրամայական էին դարձրել սեփական, ազգային մասնագետներ ունենալու անհրաժեշտությունը: 1850 թվականին հիմնադրվում է «Դար-օլ-Ֆոնունը», որն ուներ պոլիտեխնիկ բարձրագույն ուսումնական հաստատության բնույթ: Մասնագետներ պատրաստելու համար (այդ թվում դիվանագիտության բնագավառի) արտասահման են գործուղվում երիտասարդ իրանցիներ, որոնցից մի քանիսը իրենց հետ հայրենիք բերեցին արտասահմանում ճանապարհորդելու և ուսանելու տարիների վերաբերյալ ճանապարհորդական նոթեր, ուղեգրություններ և օրագրեր: Դրանից զատ արտասահմանյան (հատկապես եվրոպական) երկրների ու

Ռուսաստանի հետ աշխուժացած դիվանագիտական հարաբերությունների բերումով հաճախացել էին պետական այրերի՝ շահի ու դիվանագիտական պատվիրակությունների՝ տարբեր նպատակներով (պայմանագրերի ու համաձայնագրերի կնքում, դեսպանությունների հիմնում, կապերի ամրապնդում և այլն) այցելություններն արտերկիր։ Եվ քանի որ բոլոր պետական ծառայողներն ի պաշտոնե պարտավոր էին գրավոր հաշվետվություն ներկայացնել կատարած աշխատանքի, արտասահմանում անց կացրած ժամանակահատվածի, տեսածի ու լսածի վերաբերյալ, ապա նրանց գրառումները հետագայում վերածվում էին ճամփորդական օրագրերի կամ ակնարկների։

Սակայն այդ ժամանակաշրջանի հուշագրական գրականության նմուշներից (այդ թվում և օրագրերից) շատ քչերն են հրատարակվել և տարածում գտել ընթերցողների շրջանում։ Դրանց մեծ մասը երկար տարիներ մնացել է անհայտ, գրադարանների անկյուններում, անհատական հավաքածուներում կամ պետական դիվաններում՝ ձեռագրերի տեսքով։ Հավանաբար, հիմնականում այդ է պատճառը, որ այս ստեղծագործությունները ինչպես հարկն է դեռևս չեն ուսումնասիրվել¹։

XIX դարի ստեղծված ճամփորդական օրագրերի ամենավաղ նմուշներից մեկը Սիրգա Սալեի Շիրագիի «Սաֆար-նամեն» է։ Շիրագին 1815-1819 թթ. թագաժառանգ արքայազն Աբբաս Միրզայի և հայտնի պետական գործիչ Ղայեմ-Սադամի համեմարարությամբ մի խումբ իրանցի ուսանողների հետ ուղևորվել է Եվրոպա՝ որպես խմբի հոգաբարձու։ Խումբը կազմվել էր հետագայում երկրի կառավարական ատյաններում պաշտոնավարելու կարող թարգմանիչներ պատրաստելու նպատակով։ Սալեի Շիրագին ինքը ևս սովորել է անգլերեն, ֆրանսերեն, լատիներեն, ուսումնասիրել փիլիսոփայություն ու տպագրական գործ։ Օրագրի ամենօրյա գրառումները մանրամասնում են նրա ճամփորդության ընթացքը, Անգլիայում ուսումնառության պայմաններն ու հանգամանքները։ Այստեղ ծեռք բերած գիտելիքները նրան օգնել են Թավրիզում հիմնել առաջին տպարանը և 1839 թ. հրատարակել պարսկերեն առաջին ամսաթերթը՝ «Քաղազ-ե ախբար»-ը («Լուրերի թերթ»)՝ Այդ պարսիկ երիտասարդը հայրենիք էր բերել և իր ստեղծագործության

¹ Մասնավորապես Նասր-ադ-դին շահի և Մոզաֆար-ադ-դին շահի ճամփորդական օրագրերին, հուշագրություններին, պարսից գրականության վրա դրանց ազդեցության մասին անդրադարձ կա Յ. Ռիպկայի խմբագրությամբ հրատարակված՝ «Պարսից և տաջիկական գրականության պատմություն» գրքում։ Սաֆար-նամե ժանրին է նվիրված նաև հայտնի ռուս իրանագետ Դ. Ս. Կոմիսարովի ղեկավարությամբ հրատարակված «XIX—XX դարերի պարսից գրականության պատմություն» հիմնարար աշխատության մի ենթագլուխը։ Կան նաև մի քանի այլ հետազոտություններ, որոնք վերաբերում են առանձին ստեղծագործությունների և չեն բնութագրում ամբողջ մեմուարային ժանրը ընդհանրապես և օրագրերի ենթաժանրը մասնավորապես։

² Sb'u Abdul-Hadi Haiiri, Shiism and constitutionalism in Iran, Leiden, Netherlands, 1977, էջ 12։

նկատառումներով Մոզաֆար-ադ-դին շահը մեկնում է արտասահման՝ Ռուսաստան և եվրոպական մի քանի երկրներ՝ ծանոթանալու⁵:

Ճամփորդական օրագրի ենթաժանրին է պատկանում Սիրգա Սալեի Շիրազիի "Մաֆար-նամեն": Շիրագին իր ստեղծագործությունը բաժանել է չորս մասի՝ ըստ ճամփորդության տեղավայրերի: Բոլոր մասերում մատուցվող նյութը գատաբաժանված է ըստ օրերի: Նրա ճանապարհորդությունը սկսվում է Թավրիզից, անցնում Մարանդով, Նախիջևանով, Ջուլֆայով, Երևանով, Թիֆլիսով, Պետերբուրգով: Այնուհետև նա ծովով հասնում է Լոնդոն, որտեղ որոշ ժամանակ ուսանելուց հետո (երեք տարի և ինն ամիս) նավով մեկնում է Մալթա, որից հետո Ստամբուլով հասնում Իրան:

Պատմական այս սկզբնաղբյուրում ուշագրավ ու կարևոր են հեղինակի հայկական բնակավայրերի նկարագրությունները. նրա ճանապարհը անցնում է Ջուլֆայով, որը նա ներկայացվում է որպես «հին հայկական քաղաք»⁶, պատկերում է հայկական հուշարձաններն ու գերեզմանները, պատմական ակնարկ է կատարում Շահ Աբասի՝ Հայաստան կատարած արշավանքի ու հայերի տեղահանման մասին: Հիշատակում է հայ արքայադուստր գեղեցկուհի Շիրինի ու խոսքով Փարվիզի սիրո առասպելը, իսկ խոսելով Արաքսի մասին՝ ներկայացնում է Հաֆեզի երկտողը, նվիրված այդ գետին:

«ای صبا گر نگری بر ساحل رود ارس بومه زن بر خاک آن وادی و مشکین کن نفس»

(է~յ, գեփյուռ, եթե անցնես Արաքս գետի ափերով

Համբույր տուր այն գետահովտին և բուրավետ դարձրու շունչդ⁷):

Ընդհանրապես, հեղինակը Հայաստանի մասին խոսում է հիացմունքով ու մեծ հարգանքով: Երևանի մասին խոսելիս, նշում է, որ «բարեկարգ ու խիտ բնակեցված է»⁸, ինչպես նաև շատ լավ զինված ու ամրացված քաղաք է⁹, որն այդ ժամանակ արդեն գտնվում էր Ռուսաստանի տիրապետության տակ: Որպես պարտադիր այցելության վայր (ինչպես մյուս բոլոր ճանապարհորդները, որոնք անցել են Հայաստանով - Ա.Ս.) Շիրագին հիշատակում է «Ուլքեխսան», այսինքն՝ Հայաստանի հոգևոր կենտրոն էջմիածինը, որի առիթով նշում է իր ճանապարհորդության կարևորագույն նպատակը՝ տարբեր կրոնների ուսումնասիրությունը¹⁰:

⁵ Տե՛ս՝ History of civilizations of Central Asia, Volume VI, Towards the contemporary period: from the mid-nineteenth to the end of the twentieth century, Coordinated by I.Iskender-Mochiri, UNESCO, 2005, էջ 472-474:

⁶ . 100 م، 2008، نشر دانشگاه معاصر، تهران، مدافع شیرازی، تهران، نشر دانشگاه معاصر

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 107:

⁹ Նույն տեղում, էջ 108:

¹⁰ Նույն տեղում, էջ 111:

երկի՝ Էքմիածնին վերաբերող հատվածում նա խոսում է երեք կույսերի նահատակման, Գրիգոր Լուսավորչի ու, ընդհանրապես, Հայաստանում քրիստոնեությունն որպես պետական կրոն ընդունման ու տարածման մասին: Ընդ որում նա նշում է, որ Հայաստանն առաջին հերթին ասոցացվում է քրիստոնեության հետ¹¹: Այնուհետև հեղինակի ուղին անցնում է Ապարանով ու Ղարաքիլիսայով՝ դեպի Վրաստան: Թիֆլիսի Ճանապարհին ընկած վրացական գյուղերի մասին խոսելիս, Շիրազին ընդգծում է, որ դրանցից շատերում գերակշռում է հայազգի բնակչությունը¹²: Ընդ որում Վրաստանը ներկակացնելիս նա դիտարկում է, որ «երկրի բնակչության կեսից ավելին հայեր են, որոշ բվով՝ վրացիներ ու մի քանի մահմեդազգիներ»¹³: Թիֆլիսում գտնվող կրոնատեմերի մասին իր խոսքում նա մանրամասնում է, որ տասնհինգը հայկական են, տասնմեկը՝ վրացական, երկուսը՝ ռուսական, իսկ մահմեդականներն էլ մեկ մզկիթ ունեն¹⁴: Այս տվյալները հատկապես արժեքավոր են որպես անկողմնակալ տեղեկությ, որը ներկայացված է ոչ թե որևէ հայազգի պատմաբանի կամ հայկական աղբյուրի կողմից, այլ պարսիկ ճանապարհորդի օրագրի էջերում:

Իր տեսած ու լսածից Շիրազին կարևորում է գյուղերի ու քաղաքների մեծության, նրանց միջև ընկած տարածության, շուկաների և քաղաքը շրջապատող պարիսպների առկայության վերաբերյալ տեղեկատվությունները: Նրա տեսադաշտում են բանտերը, ուսումնական հաստատությունները, զանազան շինություններն ու կամուրջները: Հուշագրողի հետաքրքրությունների ընդգրկունությունն ու խորաթափանցության վկայությունն են նրա «ճշգրտումները» քաղաքների արդյունաբերական ձեռնարկություններին (հատկապես ռազմական), դրանց արտադրանքի տեսականուն և ծավալին, արտադրության կազմակերպման առանձնահատկություններին առնչվող մանրամասները: Ուսաստանի քաղաքներում Մոսկվայում, Պետերբուրգում, Տուլայում և այլուր նրա վրա մեծ տպավորություն են թողնում ֆաբրիկաները, գործարանները, մշակութային հաստատությունները: «Նա մանրամասն նկարագրում է Տուլայի զինագործարանը, պատմում վուշի, լուցկու, թղթի ֆաբրիկաների մասին, ինչպես նաև դպրոցների, հիվանդանոցների, թանգարանների, թատրոնների, գրադարանների մասին: Նրան հետաքրքրում են գիտության զարգացումը, արվեստն ու գրքի տպագրությունը»¹⁵:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 117:

¹³ Նույն տեղում, էջ 118:

¹⁴ Նույն տեղում, էջ 119:

¹⁵ История персидской литературы XIX—XX веков, рук. проекта Комиссаров Д.С., М., Изд. фирма "Восточная литература" РАН, 1999, с. 230.

Նույնպիսի ոգևորությամբ Շիրազին պատմում է Լոնդոնի տեսարժան վայրերի, Սեծ Բոհտանիայի պետական համակարգի, նրա պատմության մասին: Ակներևաբար նա բոլոր գրառումները կատարել է այն ակնկալությամբ, որ դրանք կկարդան Իրանի բարձրաստիճան անձինք և կպատմեն շահին, ու միապետը կցանկանա որոշ բարեփոխումներ կատարել:

Այստեղ հեղինակը նաև պատմական բազմաթիվ տեղեկություններ է տալիս այցելած երկրների ու քաղաքների մասին: Նա հաճախ համադրում-համեմատում է իր տեսածը Պարսկաստանի համապատասխան իրողությունների հետ (կառավարման, դատական, կրթական համակարգերը): Ընդ որում, նա համեմատում է ոչ միայն արտասահմանյան ու պարսկական, այլև արտասահմանյան երկրների համանման ինստիտուտները:

Նասր-ադ-դին շահ Ղաջարի «Ռուզնամե-ե խաթերաթ-ե Նասր-ադ-դին Ղաջար դար սաֆար-ե ավվալ-ե Ֆարանգեսթան» («Նասր-ադ-դին շահի եվրոպական առաջին ճանապարհորդության հիշողությունների օրագիրը») ¹⁶, «Ռուզնամե-ե խաթերաթ-ե Նասր-ադ-դին Ղաջար դար սաֆար-ե դովվոմ-ե Ֆարանգեսթան» («Նասր-ադ-դին շահի եվրոպական երկրորդ ճանապարհորդության հիշողությունների օրագիրը») ¹⁷ և «Ռուզ-նամե-ե խաթերաթ-ե Նասր-ադ-դին շահ դար սաֆար-ե սեվվոմ-ե Ֆարանգեսթան» («Նասր-ադ-դին շահի եվրոպական երրորդ ճանապարհորդության հիշողությունների օրագիրը») ¹⁸ հուշագրությունները կրում են օրագրային ենթաժանրին հատուկ հիմնական բնութագրիչները: Ղրանցից առաջինում (ինչպես նաև մյուս երկուսում) նյութը ներկայացված է ըստ օրերի՝ արևային տոմարով, կազմված է 135 մասից: Ճանապարհորդությունը սկսվել է 1290 թ. սաֆար-ալ-մոգաֆար ամսվա 21-ին (1873 թ. ապրիլի 20-ին) և տևել է մինչև նույն թվի շաբաթն ամսվա 3-ը (սեպտեմբերի 26-ը)՝ հինգ ամիս ինն օր ¹⁹:

Նասր-ադ-դին շահի առաջին ճանապարհորդությունն ընթացել է Թեհրան - Էնզելի - Կովկաս (նավով) - Ռուսաստան - Գերմանիա - Բելգիա - Անգլիա - Ֆրանսիա - Շվեդիա - Իտալիա - Աթենք - Թուրքիա - Կովկաս - Էնզելի - Թեհրան երթուղիով:

Երկրորդ ճանապարհորդության օրագիրը ևս կազմված է ամենօրյա գրառումներից և, ընդհանրապես, կարելի է ասել, որ շահի օրագրերում տեքստի

¹⁶ روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر اول فرنگستان، تهران، انتشارات سازمان اسناد ملی ایران، 1998/1377.

¹⁷ روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر دوم فرنگستان، تهران، انتشارات سازمان اسناد ملی ایران، 2000/1379.

¹⁸ روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر سوم فرنگستان (کتاب دوم)، تهران، انتشارات سازمان اسناد ملی ایران، 1995/1374.

¹⁹ روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر اول فرنگستان، تهران، انتشارات سازمان اسناد ملی ایران، 1998/1377.

շարադրածը միևնույնն է: Այս ճանապարհորդությունը տևել է չորս ամիս ու ինը օր: Այս անգամ նրա երթուղին սկսվելով Թեհրանից՝ անցնում է Ղազվինով, Թավրիզով, Մարանդով, Նախիջևանով, Երևանով, Թիֆլիսով, Մոսկվայով և Պետերբուրգով, Բեռլինով, Փարիզով, Ստրասբուրգով, Լթենցով, Պետրուշևսկի նավահանգիստով, ավարտվում է Էնգելիով ու Ռաշթով: Այս սաֆար-նամեում մանրամասն նկարագրում-ներկայացնում է իր տեսած բոլոր մշակութային, կրթական հաստատությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, ճանապարհային փոխադրամիջոցները և այլն: Հարկ է նշել, որ այս օրագրում ոչ հազվադեպ առկա է խոսքի չեշտված զգացմունքայնություն, որ ակնհայտ է իր պատվին կայացած ընդունելության, ինչպես նաև բնության գեղեցիկ տեսարանների, երբեմն՝ հասարակ մարդկանց նրա նկարագրություններում:

Երրորդ ճանապարհորդության օրագիրը բաղկացած է երեք հատորից, որոնք կազմված են օր առ օր կատարված գրառումներից: Այս ճանապարհորդությունը տևել է վեց ամիս տասներկու օր²⁰: Բոլոր օրագրերում շարադրանքը, ըստ պարսից դասական շրջանի արձակում ամրակայված ավանդույթի, միջարկվում է բանաստեղծական հատվածներով:

Ժամանակակից իրանցի գրականագետ Ֆաթեմե Ղազիհան, ում ջանքերով է տպագրվել շահի առաջին ճամփորդության օրագիրը, հրատարակության նախաբանում գրում է. «Այս գիրքը նրա [շահի] եվրոպական առաջին ճանապարհորդության հուշագրությունն է...»²¹: Սակայն, քանի որ շահը նշում է, թե ամեն մի իրադարձություն ինքը գրի է առնում ճանապարհի ընթացքում, մինչև հաջորդ կայանատեղ հասնելը, կամ՝ հասնելուն պես, ապա ակնհայտ է, որ երկը ըստ ամենայնի գրված է օրագրի կանոններով: Հի բացառվում, որ այն հետագայում ենթարկվել է որոշ մշակումների:

Թագավորական ընտանիքի անդամների ուղեգրությունները կամ օրագրերն ունեն որոշ առանձնահատկություններ, որոնցից մեկն այն է, որ շահերը, հավանաբար, անձամբ չեն կատարել գրառումները, դա նրանց փոխարեն ու հանձնարարությամբ արել են օգնականները կամ քարտուղարները: Որպես կանոն դրանք գրված են առաջին դեմքի հոգնակի թվով՝ պարսկական (և ոչ միայն) էտիկետի համաձայն, ըստ որի թագավորական ընտանիքի անդամը ինքն իր մասին խոսում էր հոգնակի թվով: Թագավորական ընտանիքի անդամների անունով հայտնի ստեղծագործությունների ևս մի առանձնահատկությունն այն է, որ նրանք

جمشید گیلان فر، نگاهی به کتاب: روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر اول

فرنگستان، کتابهای تاریخی و جغرافیای تهران، بهمن، 1377، ص. 4.

روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر اول فرنگستان، تهران، 1377/1998، ص. 11.

ավելի հանգամանորեն պատկերում են իրենց առօրյան, սեփական անձին առնչվող իրադարձությունները, քան այցելած երկրները: Նրանց ուշադրությանն են արժանանում, հատկապես, բացառիկ, անսովոր կամ արտակարգ երևույթները և շքեղությամբ զմայլեցնող իրադարձությունները: Նման պարագաներում նրանք ժլատ չեն մանրամասների մեջ: Նրանց օրագրերում այդպես են նկարագրվում թատրոնները, արքայական պալատները, գիտության ու տեխնիկայի նվաճումների արդյունքները, իջևանատներն ու դրանցում առկա հարմարավետության պայմանները: Ասել է թե՛ ճանապարհորդի դասային պատկանելությամբ է պայմանավորված տվյալ հուշագրության համար իրողությունների ընտրությունը: Բարձրաշխարհիկ հեղինակի հետաքրքրությունների շրջանակում, բնականաբար, չէին կարող հայտնվել ցածր խավի մարդկանց կյանքի մանրամասները, կենսապայմանները կամ առօրյան: Հարկ է ընդգծել հետևյալ հանգամանքը, որ տվյալ ժամանակի Պարսկաստանի ապրելակերպի համեմատ Եվրոպայի կյանքի շատ թերություններ աննկատ էին մնում ճանապարհորդների համար, և հեղինակներից շատերը իդեալականացնում էին արևմուտքի երկրները թե տնտեսական, քաղաքական, և թե կրթական, դատական ու այլ տեսակետներից: Այսուհանդերձ, եվրոպացիների ազատ բարքերն ու կենցաղը հաճախ իսլամական շարիաթի կանոններով դաստիարակված իրանցիների զարմանքը, նույնիսկ դժգոհությունն ու զայրույթն էին շարժում:

Պետք է նշել, որ այս երկի ճանաչողական արժեքը ոչ միայն և ոչ այնքան եվրոպական երկրների վերաբերյալ հաղորդած տեղեկությոն է, այլև շաի՛ի՝ այստեղ անդրադարձ գտած վերաբերմունքը և ընկալումները պատմական, հասարակական որոշ իրադարձությունների ու փաստերի վերաբերյալ: Օրինակ՝

«... خیر فتح «پستان را می آورد، بسیار بسیار خوشحال شدم»²²

(«Սիսթանը գրավելու լուրը բերեց, շատ-շատ ուրախացա:»)

Այստեղ խոսքը Պարսկաստանի ու Աֆղանստանի միջև Սիսթան ու մի քանի այլ նահանգներին տիրելու համար պատերազմական գործողությունների մասին է (1857- 1873թթ.)²³:

«... در رشت که صندرا اعظم استعفا کرد و قبول شد. آمدیم امیرزاده هاشم با کمال کج خلقی و اوقات تلخی

به طوری که هیچ وقت این طور کج خلق نبودم، ام، در راه با آمدی حرف نمیزدم»²⁴

²² Նույն տեղում, էջ 12:

²³ Sten` Шитов Г.В., Персия под властью последних Каджаров, изд. АН СССР, Л., 1933, էջ 178:

²⁴ روزنامه خاطرات ناصرالدین شاه بر سفر اول فرنگستان، تهران، 1377/1998، ص. 388.

(«...Ռաշթի կառավարիչը հրաժարական տվեց, և այն ընդունվեց: Եկանք Հաշեմի դամբարան ծայրահեղ նյարդայնացած ու այն աստիճան դժգոհ, որ երբեք այդպես զայրացած չէի եղել, ճանապարհին ոչ մեկի հետ չէի խոսում :»)

Ակնհայտ է նաև, որ օրագրի այն մասերը, որ գրվել են մինչև ուղևորության այս կամ այն կետը հասնելը, ավելի հարուստ են փաստագրական առումով, այսինքն նկարագրությունները և իրադարձությունների մասին խոսքն ավելի սեղմ ու հակիրճ է: Մինչդեռ քաղաքներում անցկացրած ժամանակահատվածներին վերաբերող հատվածներում, (հանդիսավոր ընդունելություններ, շրջագայություններ, տեսարժան վայրեր և այլն), խոսքի գեղարվեստական պատկերավորությունն ավելի շեշտված բնույթ ունի (բազմազան պատկերավոր նկարագրություններ, թվարկումներ, համեմատություններ, մի քանի հոմանիշ-ածականներով տրվող բնութագրումներ, շրջադասության առկայություն, երկխոսությունների մեջբերում և այլն): Նասր-ադ-դին շահը քաղաքների, բնակավայրերի և աշխարհագրական այլ անվանումները, անուն-ազգանունները և առարկաների օտարալեզու անվանումները գրառում է լատինատառ, ոչ թե արաբագիր տառադարձմամբ:

Սոգաֆար-ադ-դին շահի «Սաֆար-նամե-ե մոբարաթե-ե շահնշահի» («Շահնշահի օրհնյալ ճամփորդական օրագիրը»)՝²⁵ ևս կրում է օրագրական ժանրի հիմնական հատկանիշները: Այստեղ ևս նյութը մատուցվում է ըստ գրառման օրերի՝ շաբաթվա օրերի նշումով: Հեղինակն իր ճամփորդության յուրաքանչյուր օրը նկարագրում է ամենայն մանրամասնությամբ: Նկարագրությունները առնչվում են ոչ միայն օրվա անցուդարձին, այլև շրջապատող բնությանը, ճանապարհին հանդիպած բնակավայրերին, մարդկանց և նրանց բնակելի պայմաններին: Տեղեկություններ են տրվում յուրաքանչյուր քաղաքում իրեն այցելած մարդկանց վերաբերյալ: Բնակավայրերի մասին խոսելիս՝ նա մի դեպքում հանգամանորեն ներկայացնում է քաղաքը՝ իր տեսարժան վայրերով, մյուս դեպքում՝ միայն այցելած բնակավայրերի ցուցակը՝ առանց որևէ մանրամասների: Նույն կարգի են հեղինակի՝ մարդկանց վերաբերյալ գրառումները: Նա մեկին կարող է բնութագրել և արտաքննապես, և ըստ բնավորության ու գիտելիքների, իսկ մյուսներին՝ ուղղակի անունների թվարկումով: Օրագրի լեզուն համեմատաբար պարզ է, բարդ նախադասությունները համեմատաբար քիչ են: Ուշագրավ է, որ այս օրագրում հազվադեպ չեն բուն շարադրանքից խոհա-զգացմունքային շեղումները: Օրինակ՝ կյանքի ու գոյության մասին խորհելիս, նա ասում է .

«گاهی تری و رنج برای انسان لازم است تا او را بنیاد پروردگار خویش بیند...»²⁶

²⁵ مظفر الدین شاه، سفرنامه مبارکه شاهنشاهی، تهران، 1943/1321.

²⁶ مظفر الدین شاه، سفرنامه مبارکه شاهنشاهی، تهران، 1943/1321، ص. 23.

(«Երբեմն ցավն ու տառապանքը մարդուն անհրաժեշտ են, որպեսզի նրան հիշեցնեն Արարչի մասին...»)

XIX դարի պարսից ուղեգրությունների վերլուծությունը ցույց է տալից, որ դրանք բաղկացած են թե նկարագրական, թե պատմողական մասերից, ինչը հուշագրական ժանրի ստեղծագործությունների բնութագրական հատկանիշներից մեկն է: Նկարագրական տեքստերում, օրագրային «ես»-ի տեսանկյունից հեղինակը դիտում, նկարագրում է երևույթները, մարդկանց, վայրերը և իրավիճակները: Այդպիսի տեքստեր կան բոլոր ստեղծագործություններում: Օրինակ՝

«تماشاخانه بزرگی دارد که هر شب اهالی شهر به تماشاخانه می روند و اوقاتی می گذرانند»²⁷

(«Մի մեծ թատրոն կա, ուր ամեն երեկո քաղաքի բնակչությունը գնում է դիտելու և ժամանակ անցկացնում»:

«یک کلیسای ارمنی در لندن است که آنها نیز به طریقه ارمنه عبادت می کنند»²⁸

(«Լոնդոնում մի հայկական եկեղեցի կա, որտեղ նրանք նույնպես հայոց կարգով են աղոթում»):

«اول به مقبره سلاطین روسیه رفتم، جای است خفه و کلیه ماذنه مستوفیهای قبور سلاطین را که از

مرمر است در زاویه ها چیده اند، از پتر کبیر تا نیکلا همه اینجا دفن هستند»²⁹

(«Նախ Ռուսաստանի թագավորների դամբարանը գնացի, մոայլ և եկեղեցու նման մի տեղ է: Թագավորների գերեզմանաքարերը, որ մարմարից են, անկյուններում են տեղադրված: Պետրոս Սեֆից մինչև Նիկոլայ բոլորը թաղված են այստեղ»):

Տեքստերում, ոչ հազվադեպ, պատմողական և նկարագրական հատվածները զուգահեռվում են, հաճախ՝ միահյուսվում: Դրանք գրառումներ են հեղինակի հետ կատարված դեպքերի մասին: Սակայն միշտ չէ, որ այդ տեքստերում նկարագրվում են հեղինակին առնչվող իրադարձությունները: Երբեմն որոշ հեղինակների պատմողական տեքստերի նյութ են դառնում ոչ թե մեկ-երկու իրադարձություն, այլ թվարկվում է ամբողջ օրվա ընթացքում կատարվածը: Այս դեպքում տեքստի մեջ առկա են բազմաթիվ կրկնողություններ, քանի որ օրվա անցուղարձի մասին պատմելիս հեղինակը ականա հիշաբերում է ամենօրյա որոշակի արարողակարգով պարբերաբար կամ ժամանակ առ ժամանակ կատարվող գործողություններ: Այդպիսին են, օրինակ, Նասր-ադ-դին շահի բոլոր օրագրերի տեքստերը, որտեղ ամեն նոր օրվա պատմություն հիմնականում սկսվում է հետևյալ կերպով.

«امروز یادم برویم به شفیله، از جواب بر داشتیم، نهال جور نیل»³⁰

²⁷ مجموعه سفرنامه های میرزا صالح شیرازی، تهران، 1387/ 2008، ص 279.

²⁸ Նույն տեղում, էջ 400:

²⁹ روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر اول فرنگستان، تهران، 1377/ 1998، ص 63.

(«Այսօր պետք է գնանք Շեֆիլդ, քնից արթնացանք, ճաշեցինք...»)

«امروز باید به شفیله برویم...»³⁰

(«Այսօր պետք է գնանք Սոֆիա...») Կամ օրինակ՝

«چهار ساعت از نصف شب گذشته، روانه فرانکفورت شدیم...»³²

(«Կեսգիշերից չորս ժամ անց, շարժվեցինք դեպի Ղարաքիլիսա...»)

Ընդ որում, առաջին երկու դեպքում ակնհայտ է, որ գրառումը կատարվում է ընթացքում, անմիջապես իրադարձությունից հետո, դրան զուգահեռ կամ, նույնիսկ, դրանից առաջ, իսկ երրորդ դեպքում իրադարձության մասին խոսվում է որպես ավարտված ու կատարված փաստի մասին: Նման պարագայում գրառումը, ըստ երևույթին, կատարվում է կամ նույն օրվա վերջում, կամ մի քանի օր անց, ինչը ենթադրում է նյութի որոշ մշակում ու ընդհանրացում, այլ ոչ թե ուղղակի փաստի արձանագրում, ինչպես նաև իրադարձությունների նկարագրական շարադրում ու լեզվական միջոցների ավելի նուրբ ու ուշադիր ընտրություն:

Ժամրային առանձնահատկության բերումով ուղեգրությունները, ճամփորդական հուշագրություններն ու օրագրերը անխուսափելիորեն պիտի նորոգվեն բերեն թե՛ գրավոր խոսքի շարադրածներում և թե՛ լեզվական արտահայտչամիջոցներում: Այդ ժամանակաշրջանի սաֆար-նամեների լեզուն, բնականաբար, նշանակալի չափով պայմանավորված էր թե՛ հուշագրություն ստեղծելու դրդապատճառներով ու նպատակներով, թե՛ այցելած երկրներում հեղինակի ձեռք բերած տեղեկություններով և դրանցում գործառնվող լեզուներով: Ակնհայտ է, որ կյանքի ամենատարբեր ոլորտներին վերաբերող խոսքն ու նկարագրությունները անհամեմատ ավելի հարմար և դյուրին էր շարադրել արձակով: Նկատի ունենալով դասական և ետդասական շրջանում պարսից արձակի պակաս զարգացած լինելու իրողությունը, կարելի է ասել, որ հուշագրության ամրակայումը էական նշանակություն ունեցավ XIX դարի Իրանի գրականության մեջ այս տեսակի առումով զարգացման համար: Նորահայտ ժանրը, բովանդակային նոր, ինքնահատուկ ընդգրկումների շնորհիվ լեզվի ու ոճի նորացում ու պարզեցում էր բերում³³:

Իհարկե, ճանապարհորդական նոթագրություններում առկա՝ Ռուսաստանի, Եվրոպական և այլ երկրների վերաբերյալ հարուստ նյութն ուներ ճանաչողական մեծ նշանակություն: XIX դարում Պարսկաստանը գտնվում էր քաղաքական ու

روزنامه خاطرات ناصرالدین شاه در سفر سوم فرنگستان (کتاب دوم)، تهران، 1995/1374، ص. 88

مظفرالدین شاه، سفرنامه سارکله شاهنشاهی، تهران، 1943/1321، ص. 42

علامه حسن میرزا صالح شیرازی، سفرنامه هاما میرزا صالح شیرازی، تهران، نکه معاصر، 1387، ص. 110

³³ Այս մասին մանրամասն տես՝ Ա. Մարտիրոսյան, Պարսից արձակ լեզվի պարզեցման միտումների դրսևորումները XIX դարի սկզբի ուղեգրություններում, «Իրան-Նամե» արևելագիտական հանդես, հատոր 42-43, Ե., 2010-2011, էջ 91-94:

սոցիալ-տնտեսական ծանր վիճակում, անհաղորդ ժամանակի գիտա-տեխնիկական նվաճումներին՝ զուրկ դրանց արդյունքներից օգտվելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով, ուղեգրություններն ու ճանապարհորդական օրագրերը իրանցի ընթերցողին ծանոթացնելով քաղաքակրթության նորագույն ձեռքբերումներին՝ դրանց Պարսկաստան ներթափանցման անուղղակի նախադրյալներ էին ստեղծում: Նկարագրելով օտար պետությունների ու ժողովուրդների կյանքը, սովորույթները, գիտության, տեխնիկայի և մշակույթի բնագավառում այն նորահայտ իրողությունները, որոնք գոյություն չունեին իրենց հայրենիքում, ճանապարհորդները իրենց հուշագրություններով նպաստում էին առաջադիմական հայացքների ներթափանցմանը Իրան, ինչն, իր հերթին, հասարակական մտքի, ազգային ինքնագիտակցության զարթոնքի հող էր նախապատրաստում: Այս առանձիվ կարելի է ասել, որ ճամփորդական օրագրերը թեև բուն իմաստով լուսավորական գրականություն չեն համարվում, սակայն գործառույթային նշանակությամբ սերտակցում էին վերջինիս: Եվ, թերևս ամենակարևորը, ի թիվս պատմական այլ աղբյուրների, ճամփորդական օրագրերը փաստա-ճանաչողական հարուստ նյութ են տրամադրում պատմաբաններին: Ինչպես նշում է իրանցի հետազոտող Մ.Ռ. Դանունփարվարը իր «Պարսկական հայելու մեջ» գրքում, ճամփորդական օրագրերի և նոթերի ժանրով ստեղծված երկերը գտնվում են ժամանակակից հասարակագետների, հատկապես, պատմաբանների ուշադրության կենտրոնում՝ անցյալ դարի պատմական իրողությունների վերականգնման նպատակով:³⁴

Հուշագրական նոթերի, մասնավորապես, օրագրերի, սկզբնաղբյուրային ճանաչողական նշանակությունը կարևորելով՝ իրանցի խոշոր գրականագետ Սաիդ Նաֆիսին նշում է, որ դրանք օգնում են լուսաբանելու Պարսկաստանի պատմության այն էջերը, որոնք մինչ այժմ պատված են մշուշով, և տվյալ ստեղծագործությունները լույս են սփռում պատմության այդ մութ էջերի վրա և հաճախ այդ ժամանակաշրջանի մասին տեղեկատվության միակ աղբյուրն են³⁵:

Ընդհանրապես, հուշագրական ստեղծագործությունը ունի յուրահատուկ բնույթ, որը թելադրում է մոտեցումների տարբերակում: Պահպանվում են դասական մի շարք սկզբունքներ՝ ժամանակագրական հաջորդականություն, գրառման և գրառվող նյութի համաժամանակություն և ներկայացնում են ժանրի գոյաբանական-անձնական ենթատեսակը: Իսկ, նյութի ընդգրկման առումով, թե օրագրերը, թե հուշագրական ուղեգրական ստեղծագործությունները գրեթե նոսրություն են

³⁴ Stü Ghanoonparvar M.R., In a Persian mirror: Images of the West in Iranian Fiction., Texas, 1993, էջ 7:

³⁵ Stü . 1996/1373 « تهران، انتشارات اساطیر، رضا کلی میرزا نایب الله، سفرنامه رضا کلی میرزا »، էջ 10-11:

պարսից գրականության համար: Սակայն պետք է նշել, որ XIX դարի սաֆար-նամե ժանրին պատկանող ոչ մի ստեղծագործություն օժտված չէ միայն մի ենթաժանրի հատկանիշներով, այսինքն, եթե նշվում է, որ տվյալ երկը օրագիր է, ապա դա նշանակում է, որ այն ուղղակի օժտված է ավելի շատ օրագրի ժանրին բնորոշ գծերով, և ամենևին էլ չի բացառում նրանում հուշագրական այլ ենթաժանրերին բնորոշ գծերի առկայությունը:

Այսպիսով, պարսից մեմուարային գրականության ճամփորդական օրագրի ենթաժանրը վերածնվել ու զարգացել է XIX դարի ընթացքում պատմական որոշ նախադրյալների հետևանքով: Այն իր ուրույն տեղը զբաղեցրեց պարսկական հարուստ ու բազմաժանր գրականության մեջ, և ճամփորդական նոթերի ու հուշագրությունների հետ հիմք դարձավ պարսկական մեմուարային գրականության զարգացման համար: Ակնհայտ է, որ XIX դարի ուղեգրությունները և ճամփորդական օրագրերը նշանակալի են որպես պարսից արձակի նորացման սկզբնավորողներ: Այդ ներդրումը մասնավորվում էր ժամանակի առաջադիմական, լուսավորական գաղափարները պարսից գեղարվեստական արձակ բերելու, իրանցի ժողովրդի համար կենսականորեն կարևոր սոցիալ-քաղաքական խնդիրները խոսքարվեստի նոր միջոցներով արծարծելու, այսինքն՝ երկրի հասարակական միտքն արթնացնելու գործով:

SUBGENRE IN DIARIES MEMOIRS OF IRAN XIX CENTURY

The article discusses several travel diaries written by Persian travelers during their trips to Russia and European countries. In these works keeps up developing a relatively new subgenre of blogs, which in the early XIX century got its second life. Here there are considered the reasons and preconditions for the emergence and the writing of "travel diaries", as well as their main features and ways of forming the traditions of Persian memoirs. The author describes the purpose of writing of these works, their genre and language features, their importance and influence on the Persian memoirs. It can be said that the diaries where rich informational base is essential to the artistic merit, are not only historical, geographical and statistical sources, displaying the difference between the reality of developed West and backward semi-colonial Iran, but also between major works of pre-illuminatory literature.